ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մարտի 2016 թվականի N 27-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի և 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2016 թվականի մարտի 18-ի <<Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություն կատարելուն համաձայնություն տալու մասին>> N 187-Ա որոշումը, **ո ր ո շ ու մ ե մ.**

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի՝

1). Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի (68-2.1-5) պաշտոնի անձնագրի <<VI. Գիտելիքներ և հմտություններ>> բաժնի 10-րդ կետի <<բ>> ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<բ) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության, <<Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին>>, <<Դեղերի մասին>>, <<Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին>>, <<Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին>>, <<Հոգեբուժական օգնության մասին>>, <<Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին>>, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>>, <<Զբաղվածության մասին>>, <<Պետական կենսաթոշակների մասին>>, <<Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին>>, <<Պետական նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> N ՆՀ-728 և 2007 թվականի հուլիսի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին>> N ՆՀ-174-Ն հրամանագրերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու,

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին N 1795-Ն որոշման և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.>>.

2). Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետի (68-2.2-7), գլխավոր մասնագետի (68-2.3-32) և առաջատար մասնագետների (68-3.2-11,14) պաշտոնի անձնագրերի <<VI. Գիտելիքներ և հմտություններ>> բաժնի 10-րդ կետի <<բ>> ենթակետերը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<բ) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության, <<Զբաղվածության մասին>>, <<Պետական կենսաթոշակների մասին>>, <<Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին>>, <<Պետական նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին N 1795-Ն որոշման և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.>> .

3).Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի (68-2.1-1), ֆիանանսատնտեսագիտական բաժնի պետի (68-2.2-21), գլխավոր (68-2.3-21), առաջատար (68-3.2-29) և 1-ին կարգի (68-4.1-20,21) մասնագետների, հաշվապահական հաշվառման բաժնի պետի (68-2.2-22), գլխավոր (68-2.3-22) և 1-ին կարգի (68-4.1-22) մասնագետների պաշտոնների անձնագրերի <<VI. Գիտելիքներ և հմտություններ>> բաժնի 10-րդ կետի <<բ>> ենթակետի <<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին>> բառերը փոխարինել <<Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2016թ.մարտի 22
ք. Կապան